ալէագատար տըր , ատէթա բարմաղլարլու
տօգուընը կիպի գաթօլիթլէք հիսս օլուընը :

Յազաթ Րօմանըն Ս . Պետրոս Բիլիսասընը
կէօրմէք . Ս . Պօղոս , Սանթա Մարիա Մաճ-
ճիօրէ , Սան Ճիօլաննի ին Լաթէրանօ , Սան-
թա Բրօշէ ին Ճէրուզալէմէ , կիպի ճի-
հանըն էն մէշհուր քիլիսալարընը զիյարէթ

իթմէք , միւղէլլէրինի , կալըրիլլէրինի , Բան-
թէնընը , Բօլօսսէսընը , Բամբիտօյիօսընը ,
Յօրօ Րօմանօսընը , Բինչիօսընը , Վիլլալարը-
նը , սու հալլարընը , ապիտէլլէրինի , Բուի-
րինայընը վէ տիկէր սէրալարընը կէօրմէք ,
Րօմայը կէօրմէք տէյիլ տիր . ճանսըզ պիր
ճիսմին սօլմուշ կիւղէլլիյինէ հայրան օլմագ
գապիլլինտէն տիր : Րօմայը կէօրմիւշ օլմագ
իշուն , Րօմայը Րօմա իտէն , Վաթիգանըն
պիր տայիրէսինտէ սաքին օլան , ումուժ
Բրիսթիանլըղն Պապաը , Բիլիսանըն լէյի-
սի էքպէրի , Ս . Պետրոսըն իյալիֆի , Յիսուս
Բրիստոսըն լույի արզտա Վէթլիլ պուլլընան
Բարա հազրէթլէրինի , օ թիյրի լուշէնզամի-
րի : օ նասիյէյի բաք վէ ճէլիլի կէօրմէք իզ-
թիգա իտէր :

Յուլիսին պէշինճի Բագար վէ օնուհնը
Ճուճաա կիւնլէրի պիզիմ իշին սահիֆէյի հա-
յաթըմըզտա էն բարլագ վէ էն պախթիյար
սաթըրլարը թէշթիլ էյլէյէճէք կիւնլէր օլ-
մուշլարտը :

Յուլիսին պէշինէ միւսատըֆ Բագար սա-
պալը Ս . Պետրոսըն գերիզմանըն իւղէրինտէ
պատարագըմը սէյլէմիշտիմ վէ սաաթ օն
պիրտէ Արհի . Գօհուհան Գերապայճառ .
Գեր . Գեր . Լեւոնեան մէքթէպի վարիշ
Մոմճեան Յովսէփ , Մէրճիմէքիան Պետրոս ,
Բիրէճեան Յովսէփ , Բէտիճեան Պէտրոս վէ
Մաճարիսթանլը Յրանչիսկոս վարդապետլէր
վէ մէքթէպին ումուժ շակիրտանը վէ տա-
վէթի մախսուս իւղէրինէ , Վաթիգանըն կէ-
նիշ մէրտիվէնլէրինտէն չըգմագտա , Րաֆա-
յէլին , Միքէլ Անժըն , Պէրնէնին , Կերշէնին ,
Վաննիին վէ էմսալի մէհէրէյի սէնաաթըն
նաղշքէրտէլլէրի օլան պիր նաղիյր գօրիտօր-
լարտան կէշմէքտէ վէ արա սըրա կհաճ պիր
սալօնտա կհաճ տա տիկէր պիսալօնտա ին-
թիզար էյլէյէրէք իլէրիլէմէքտէ իտիք : Շէր
թարաֆտա գատէկեանտան սէրայ մէմուրլա-
րը սաֆպէսթէյի սէլամ օլարուզ բիսգօպօսան
վէ սայիր մէսնէտարանը սէլամլամագտա
օլտուղը կիպի , մէմուրը մախսուսլար տախի,
հէր գաֆլայա քէնտի եէրլէրինի իրայէ վէ
վաղթը գապուլլարընը թէպիլը էյլէյօրլար-
տը : Էզ հէր ճիւնթ կէօրիւնէն ինթիզամ , է-

սէրի նեղաքէթ, օ տարը հաշմէթին քիւլֆէթի շաշաա վէ հիյպէթիյլէ զայէթ միւթէնասիպ պուլընմագտաւ իտի:

Պիզ նիհայէթ բարա հազրէթլէրինին պատարագ սէօյլէտիյի վէ Ամենապատիւ Հոգեւոր Տէր հազրէթլէրինին տէ բալլիում ալմըջ օլտուղը մատուռն էօնիւնտէքի միւթէլլէֆ սալօնընտա ինթիզարա տալէթ օլունտըզ:

Սաաթ օնիքիյի չարեէք կէչիօրտը. հաշմէթլու օնընճը Պիոս Բարա հազրէթլէրի խուսուսի գապուլլարընը պիթիրտիքտէն սօնրա. րէֆագաթը հաշմէթմէապլէրինտէ պիր գաչ զատէկեան վէ պիր տէ մէրաթիպի ալյէտէն պիր բուհպան պուլունարագ. եէկտիկէրլէրինէ միւթթաալը սալօնլարտա պէքլէյէն եիւզլէրնէ ուխտաւոր գաֆլալարընը տօլաչմաղա պաշատըլար վէ տիկէրլէրինէ սատէճէ օրհնութիւնլարընը վէրմէքլէ իքթիֆա իթտիքլէրի հալտէ, պիղիմ սալօնը թէշրիֆլէրինտէ տէսթի մուգաաաէսլէրինի շէրէֆի թագպլիլէ միւսաատէ պուլուրտըլար: Պէնիմ Սթանպօլտան կէլտիյիմի անլատըլարսա:

— Պատրիարք հազրէթլէրի նասըլ տըր— սիւալլէրինէ:

— Էյի տիր, Ս. Հայր, արզը իհթիրամաթ էյլէր— տէտիյիմտէ:

— Խայըր, էյի տէյիլ տիր, զապալընըն կէչիրտիյի էօմիւր բէք աղըր տըր, պիլիօրըմ չէքտիքլէրինէ վագըֆըմ— պուլըրտըլար:

— Էվլէթ Ս. Հայր, Պատրիարքըն հայաթը պիր խոստովանող հայաթը տըր— տէտիյիմէ:

— Շիմտի տօղրուլթտըն—պուլուրտըլար:

Վէ սըրա իլէ շակիրտանըն էօնլէրինտէն կէչտիյի վէ մեծաւոր վարդապետին տէ օնլարըն նէրէլի օլտուգլարընը պիքը իթմէք սուրէթիլէ թագադմէրի իճրա իտիլտիյի սըրատա, թրապիզօնլը պիր շակիրտ էլլէրինի էօփէճէյի վագըթ:

— Թրապիզօնլըլար էյի տէյիլտիրլէր, եպիսկոպոսլարընը իսթէմէտիլէր— տէմէլէրի իւզէրինէ, ասլէն Ամասիալը պուլունան թալիպ:

— Ս. Հայր, օնլար իսթէմէտիլէր իսէ, պիզ իսթէր վէ գապուլ էյլէրիզ, եօլընտա

ճէվապ վէրինճէ բարա հազրէթլէրի մէմուռն օլտուլար, վէ պու սուրէթլէ պապըլար թարաֆընտան «բարանըն հիչ պիր շէյտէն խապէրի եօք տըր, հէք էթրաֆընտաքիլէրին էնթրիզլէրի տիր» կիպի ճահիլ սաֆաթալարը թէքզիպ պուլուրտըլար:

Պունտան սօնրա թէքրար շէրէֆի տէսթպուսիյէ նայիլ օլտուգտան սօնրա օրհնութիւնլարընը ալըպ գալպլէրիմիզ ասիւմանի պիր մէսէրլէթլէ տօլու օլարագ քեամրան վէ մէսուտ պիր հալտէ օ տարը հաշմէթտէն միւֆարագաթ էյլէտիք:

Յուլիսին օնընճը ճուճա կիւնիւ Սրհի. Գօյունեան Պետրոս Արքեպիսկոպոս սուրէթի մախսուսէտէ բարա հազրէթլէրինին հուզուրլարընա գապուլ օլընաճաղարընաան, պէնի տէ շէրէֆի մաեթլէրինէ գապուլ էյլէտիլէր: Հէր իքիմիզտէ ճիւպպլէրիմիզի լապիս օլմուշ օլտուղումըզ հալտէ եինէ ինթիզար սալօնլարընտա պէքլէմէքտէ վէ թէտրիճէն իլէրիլէմէքտէ իտիք: Նիհայէթ թախթ օտասընտա իքէն Գեբրապայժառ իչէրի տալէթ օլընտըլար վէ եարըմ սաաթլըք պիր խուսուսի միւլապաթտան սօնրա, բարա հազրէթլէրինին զիլի շալմասը իւզէրինէ, մէմուրը մախսուս պէնի տէ ալտը վէ Գրիստոսըն վէքիլինին խուսուսի օտասընա կէօթիւրտիւ: Հէյէճանըմտան, սէվինճիմտէն, ֆարթը հիսսիյաթըմտան, կէօլլէրիմ եաշլար տէօքմէքտէ վէ տիզլէրիմ տիթրէմէքտէ իտի: Իչէրի տալիլ օլուպտա օ զաթը գուլթսիյէթսիմաթը թէքրար կէօրտիւմ վէ միւպարէք էլլէրինի տէֆաթլա էօքտիւմ իսէ գալպիմէ պիր եէնի ինչիրահ կէլտի: Պու տէֆա եինէ Կաթողիկոս հազրէթլէրինին հալլէրինի, սըհէթլէրինի սուալ, միւշարիլէյի հազրէթլէրի հազգընտա օլան պէօյիւք թէվէճճիւհէրինի պէյան վէ սէլամը բէտէրանլէրինի թէպլիղէ էմր պուլուրտըլար: Վէ Լուրսա կիտիօր օլտուղումըզ տա արզ իթտիյիմիզտէ Խօճուլըլըմըզ տա միւպարէքլէտիլէր: Պու կիւն եինէ գալիմ օլարագ սուրէթը մախսուսէտէ պիզի, պիզէ ալիս օլանլարը, ճէմաաթըմըզը, նիսաթըմըզը, պէրապէրիմիզտէ պուլընան խաչ, միտալ վէ վարդարան կիպի էչեայը բուհա:

նիյէլէրիմիզի օրհնել իթտիլէր: Պիզ տէ, ոսն
պիր տէֆա տահա օլարագ միւպարէք էլլէ-
րինտէն էօրիւպ հուզուրը շէվքէթլէրինտէն
այրըլարգ:

ԿՂԵՄԷՍ Վ. ԱՍՏՈՒՐԵԱՆ

Բօմա, 10 Յուլիս 1914

Լ Ո Ւ Ր Տ Է

Հ. Կ. ուխտաւորներէն մին կը գրէ հետեւեալը.

Լուրս, 21 Յուլիս 1914

Օղը ամպոտ է և ընդհատօրէն կ'անձրե-
ւէ, անոր հետ սակայն ուխտաւորներու բազ-
մութեան տարալին ալ կը հոսի. ուրիշ բա-
ցատրութիւն տկար պիտի ըլլար: Իջեաւն-
ներն բռնուած են և ոմանք չորեքշաբթի ա-
ւուր կ'ուզեն հասցնել իրենց սենեակներն,
որ կը շինուին գիշեր ցորեկ աշիւատու-
թեամբ:

Ուխտաւորներն տեսարանը հմայիչ է և
յուզիչ. կայարանէն մինչև մեծ հրապարակը
ուխտաւորներն սրբավայրերը, բոլոր քաղա-
քը զարդարուելու վրայ է զրասանգներով,
դրօշներով, կոթողներով, կամարներով, ա-
մէնքն ալ ելեկտրական լուսով պիտի լուսա-
ւորուին:

Այսօր կարդինալ նուիրակը կը սպասուի
Վսեմ, Կրանիդօ տի Պէլմօնդէ. շոգեպառքի
ընկերութեան բարձր պաշտօնեայ մը առան-
ձին վակօն-սալօնով մը դիմաւորելու գացած
է և պիտի ընկերանայ մինչեւ Cette. անկից
ասդին ուրիշ պաշտօնեաներ պիտի գան:
Լուրտի քաղաքապետութիւնը 20 հազար
Քրանք տրամադրած է լուսավաղութեան հա-
մար. քաղաքապետը պիտի ողջունէ Կարդի-
նալ նուիրակը. ճառը կը կարդաք լրագրին
մէջ զոր պիտի ստանաք:

Կարդինալներ, եպիսկոպոսներ ուխտաւո-
րին հրապարակին վրայ պիտի սպասեն նուի-
րակին գալստեան: Նորին Վսեմութեան հա-
սած օրէն կարդինալներ և եպիսկոպոսներ
միասին պիտի ճաչեն և ընթերեն. Ս. վեր-
նատան մէկ պատկերը պիտի ըլլայ: Համա-
ժողովոյ վարիչ մարմինը կանոնաւոր մաս-

նաժողովներու բաժնուած հիանալիօրէն կը
գործէ: Եպիսկոպոսներու բնակարանը, սեն-
եակը թուով, պատարագելու խորանը թուով,
ժամը սահմանուած են կանխաւ: Բաւական
է այդ գործոց պիւրօն հարցնել, գիտնալու
համար թէ ո՛ր եպիսկոպոսը հասած է և ո՛ւր
կը գտնուի:

Երկու հարիւր եպիսկոպոսի տեղ բռնուած
է և երկու հազար հինգ հարիւր քահանայի.
ուստի կրնանք երեւակայել կարեւորութիւնը
այս համազգային խռնումին: Հայ եպիսկո-
պոսներէ Արհի. Պետրոս Գոյունեան Արքեպ.
Բաղկեդոնի, Արհի. Անտոն Պահապանեան
եպիսկոպոս Կեսարիոյ, Արհի. Յովհաննէս
Նազլեան եպիսկոպոս Տրապիզոնի, Արհի.
Իսրայելեան Գերապայծառի կողմէ կը զրտ-
նուի Յովսէփ Վ. Խաչատուրեան, որ իր հայ-
կական տարազով ամէնուն ուշադրութիւնը
կը հրաւիրէ. եկած են նաև Անտոն Վ. Իս-
կէնտէրեան, Կղեմէս Վ. Աստուրեան, Պետ-
րոս Վ. Մէրճիմէքեան:

Յուլիոս 21ին մեր եպիսկոպոսները պատա-
րագեցին քարայրին մէջ, ուր բազմութիւնը
անընդհատ կ'աղօթէ, կ'երգէ և մոմեր կը
հալին, կը սպառին բիւրաւոր՝ յոտ Տիրամօր:

Ո՛րքան յուզիչ է ամէն ինչ որ կը շրջա-
պատէ այս օրհնեալ սրբավայրը. աղօթելու,
չարունակ աղօթելու տենդ մը կը մղէ զմարդ
վերանալու առ Աստուած. ո՛րչափ հմայք ունի
այն տեղը, ուր Աստուածածնայ յոտքը կոխած է:
Հաւատացեալներու հաւատքը զարդարած է
այս տեղը դրախտանման և բնութիւնը՝ հլու և
համերաշխ արհեստին, շրջանակ մըն է հսկայ
կոթողներուն, որոնք գերբնականի քարոզ-
ներ են:

Եթէ Տիրամօր մէկ այցելութիւնը այ՛սչափ
կ'երջանկացնէ ու կը փառազարդէ աղքատիկ
երկիր մը, ի՞նչ պիտի ըլլայ արքայութիւնը,
ուր Տիրամօր Տէրն ու. Արարիչը կը թագա-
ւորէ ամբողջ իր փառօք. ահա ինչ կ'ըսէր
բարի հաւատացեալ մը իր խսնգավառումին
մէջ: Օրհնեալ ըլլա՛յ Աստուած, օրհնեալ մեր
Փրկիչը, օրհնեալ Անարատ Յղացեալը:

Խ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ.— Սրբազան Քահանայապետը՝ Կոստանդնուպոլսոյ առաքելական նուիրակ անուանած է Ամալֆիի եպիսկոպոս Տօլչի Գերապայծառը, փոխանակ Արհի. Սարտի Գերապայծառին որուն ուրիշ պաշտօն մը պիտի տրուի Կ. Տօլչի Գերապայծառը, ծնած Զիվիթէլլա տ'Ալեանոյի մէջ 1867 Յուլիս 12ին, նախ եպիսկոպոս եղաւ Կուպլիշի, որ Կեդրոնական Ապենինեանց մէջ կը գտնուի: Պիտ ժ. Ս. Քահանայապետը ամբողջ չորս տարի անոր յանձնեց նուիրակութեան գծաւորին պաշտօններ Էքուաթէօրի, Պլիվիտիի և Բերուշի մէջ: Ամերիկայէն վերադարձին եպիսկոպոս անուանուեցաւ Ամալֆի վարդէմի և հռչակուար քաղբին, որուն մայր եկեղեցւոյ մէջ կը հանգչի Ս. Անդրէաս առաքելին մարմինը:

Նաթան անունը կրող հրեայ Ֆրանմասօնը, որ քանի մը տարի առաջ Հռոմի քաղաքապետ եղած, և կատարի կերպով կաթողիկէութեան և ի մասնաւորի Քահանայապետին դէմ արձակած նախատինքներուն և գործած չարութեանց պատճառաւ տրեւրահչակ դարձած էր, ապա Կաթողիկէ Հռոմայ միահամուռ և կուռ գործունէութեամբ թաւալլոր տապալած էր՝ ընտրութեանց պահուն, իր չարանեղ խճաղով ի միտին, և ամէն տեսակ հանրային պաշտօնէ ի բաց վտարուած: Այս ամօթայի վիճակին իբր դարման, իր եւանկիւնի ընկերներն խորհեցան կարկառուն պաշտօնով մը ցայտեցնել Նաթանի, իսկ թայէի ապօթաման զաւակին և խաւարակուռ Լօփերու տարտարոսատոհմիկ պատուելիին արժանիքը? ! և հաջ ըրին չորին զանիկայ Ֆրանմասօնութեան հըռ գերի դարձած Իտալիոյ պաշտօնէից կողմէ պատուիրակ անուանել տուին հիւսիսային Ամերիկայի մէջ կատարուելիք 1915ի Բանամայի Յուլահանգէսին Իտալիա վրդովեցաւ. բողոքեց այս խալտաւարութեան դէմ, բայց Լօփերը յաղթանակեցին և անցեալները Նաթան ուղեւորեցաւ ի Նիւ Ծօրք, իբր ներկայացուցիչ Իտալիոյ, և ընդունուեցաւ Իտալական մասօնական մարմիններէ: Բայց այդ փառքը յոյժ անցաւոր եղաւ: Քանզի այս անգամ գղղբեցան Միացեալ Նահանգներու տանուակեց միլիոն կաթողիկէայք՝ և վճարար որոշեցին բացէքբաց մերժել այդ ապօթաման հրեայ Ֆրանմասօնը, իբր ներկայացուցիչ Ամերիկայի մեծ ցուցահանգէսին, «Քանզի Նաթան քենամի մըն է Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ ծանօթ նախաքի Սրբազան Հօր, եւ ամէն Կաթողիկէից անաղղոյ՝ ամբողջ աշխարհի մէջ: Ի՞նչ Նաթանը քենամի հանդիսացաւ կրօնական ազատութեան, ուստի եւ հակառակամարս եղաւ ամերիկեան սահմանադրութեան ռզոյն. եւ թէ այդ Էրեւս Նաթանը՝ անհանելի անճանաբարեւն մըն է Միացեալ Նահանգաց քանուակեց միլիոն կաթողիկէից»: Այս բողոքա-

գիրը շրկեցին Միացեալ Նահանգներու Նախագահին, ծանուցանելով թէ՛ կա՛մ Նաթան կը փոխուի և անոր տեղ արժանաւոր մէկը կը կարգուի ներկայացուցիչ, և կա՛մ Ամերիկայի Կաթողիկէները միաձայնութեամբ չպիտի մասնակցին ցուցահանգէսին:

Այս կորովի ընթացքը տհաճին տպաւորութիւն աւաջ բերաւ. արդիւնքը այժմէն իսկ յայտնի է. ի՞նչ սոսկալի և անուանարկիչ պատուհաս. «Աւաղ փառացս անցաւորի»:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ.— Յուլիս 26ին երեկոյեան ժամերգութենէն վերջը փառաւոր կերպով տեղի ունեցաւ Ս. Հաղորդութեան թափօրը, Ս. Աստուածածին աթոռանիստ եկեղեցւոյն մէջ: Ս. Հաղորդութիւնը կը կրէր Առհապատու Յովսէփ Արքեպիսկոպոս Ռաբոնեան, և Պ. Փոխանորդը՝ Եկեղեցին ի էր իսուռն շաղմութեամբ: Քարոզեց Գեր. Յովսէփ Վ. Սարուխանեան: Հանդէսը փակուեցաւ Ս. Հ. օրհնութեամբ:

— Նոյն օրը Քաթողիկոսի մէջ ալ նոյնպիսի թափօր մը տեղի ունեցաւ:

Յուլիս 27ին Հռոմէն Պոյի՝ հասաւ Գեր. Յ. Վ. Գաղեան աշակերտ Ուրբանեան վարժարանի, վարդապետ տատուածարանութեան և փրիսոփայութեան, որ մի քանի օրէն պիտի մեկնի իր հայրենիքը Սնկերբու:

Գեր. Յովսէփ Վ. ճամփեան կ'արտօնէ թիրթի հրատարակելու թէ՛ վերջին ապօրինի ժողովին անգամ ընտրուած ըլլալուն առթիւ ինքն ալ գրաւորապէս բողոքած էր՝ չառ որ անկ էր, յայտարարելով թէ կարելի չէ իրեն ծանօթ պատճառներու համար, մասնակցել այն ժողովոյ: Հետեւապէս ձեռքած է յիշեալ ժողովին անդամակցութիւնը, որովհետեւ Մեծաւորք արգիլած են բացարձակապէս ամէն քահանայից ընդունիլ նոյն ժողովոյ անդամակցութիւնը, ինչպէս յայտնի եւ որոշ է արդէն:

Նոյնպէս Գեր. Հ. Բարսեղ Ծ. Վ. Ջոտոյեան առանձին նամակաւ կը հաւաստէ թէ ինքն եւս իրեն զրկուած ընտրական հրաւիրագիրը յետ դարձուցած է, ըստ հրամանաց Հոգեւոր իշխանութեան բողոքելով եւ յայտարարելով թէ չի կրնար անդամակցել ըլլալ այնպիսի ժողովոյ, եւ թէ կ'ուզէ որ իր սոյն յայտարարութիւնը հրատարակուի Պատրիարքարանիս պաշտօնաթերթին մէջ:

ՆԻՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Սահմանադրութեան վերահաստատման Զ տարեդարձը Յուլիս 23ին մեծ շքով տօնուեցաւ ամէն կողմի Նոյն օրուան ամենամեծ հանգէտն եղաւ զօրանցքը որ տեղի ունեցաւ Լէվէնտ Զիթիլիի մէջ:

— Կայսրը ոսկի և արծաթ իմթիւնով շքադրամ տուաւ պատերազմական նախադար Էնֆեր փառայի:

ազգային տօնին օրուան զօրահանգէսին կանոնաւորութեանը համար:

* Երեսփոխոյնը Յունիս 22-ին կէս օրէն վերջ նիստ գումարեց Խալիլ պէյի նախագահութեամբ և պարբերութեան կողմէ զրկուած երկու նոր օրինակ գիծերը յանձնեց ձեռնհաս յանձնաժողովներուն: Յետոյ գրեթէ առանց վիճաբանութեան ընդունեց առողջապահական վարչութեան ելմտացոյցը: Հատուցութեան գումարն է 44,803,050 և ծախքերունը՝ 43,434,942 դրշ: Այս վարչութեան յատկացած վարկերուն մէջ կայ նաեւ 280,000 ոսկիի գումար մը, որ պահեստի գումարէն պիտի աւելուի և մաքրանոցներու շինութեան պիտի գործածուի:

Ելմտացոյցին ամբողջութիւնն ընդունուեցաւ միասնապէս:

Յետոյ Ժողովը քննեց և ընդունեցաւ 1303—1308ի փոխտտական զինուորներուն նկատմամբ պատրաստուած օրէնքին յարակից մասը, որ մէկ տարի կ'երկարաձգէ Եգիպտոս և արտասահման փախչող զինուորներուն շնորհուած 8 ամսուան պայմանաժամը կամ իրենց ծառայութիւնը կատարելու և կամ փրկանք վճարելու համար:

— Երեսփոխոյնը Յունիս 24ի նիստին մէջ Զորամի երեսփոխան Ազմի պէյ և Պօլուի երեսփոխան Նէճուֆի պէյ նախորդ Դահիլիէին դէմ ներկայացուցին երկու նոր ամբաստանադրեր որոնք յանձնուեցան Դ. Ճիւզին:

* Յունիս 25ին, իրիկունը ժամը 3 ու կէսին. Բ. Դրան առջև մահափորձ մը տեղի ունեցաւ Խալիլ Ապպաս Հիլմի փաշայի դէմ, որ հիւրամեծար զօր. Հիլմի փաշայի հետ արքունական բաց կառքով Եգիպտոսի ալքիւլէ յետոյ Շէյխ—Իւլ—Խալամին պաշտօնարանը կ'երթար, ետեւն ունենալով կոյսերական անձնապահ զօրքեր և երկրորդ կառք մը ուր կը գտնուէին Պլաշ գործակատար ձէլալէտտին փաշա և Խալիլի թուրքերէնի դիւանապետ Զէքի պէյ:

Խալիլին կառքը Բ. Դրան արտաքին վանդակորմէն դուրս ելլելուն պէս Մահմադ անունով քանտանայ երիտասարդ եգիպտացի մը տարճանակը ձեռքը՝ կառքին ետեւէն սկսաւ վազել և կրակել:

Խալիլը զարմացած ստքի կեցած էր. սակայն իսկոյն նստաւ, վանդի երեսէն զարնուած էր և արիւն կը հոսէր: Այդ միջոցին Զօր. Հիլմի փաշա ոտքի ելաւ և հրամայեց կենալ Ա. զօրաբանակին կեդրոնին առջև որ մօտը կը գտնուէին Մարգապանը սակայն, չէր կեցած, կառքին քովէն կը վազէր միշտ կրակ ընելով: Այդ միջոցին քաղաքային ոստիկան Սալիհ էֆ. իսկոյն ոճրագործին վրայ յարձակելով բռնեց, բայց երիտասարդը դէպ պարպեց ոստիկանին վրայ, որ վերաւոր գետինն ինկաւ: Նոյն պահուն ոճրագործը նորէն տարճանակ պարպած էր հաւանօրէն ձէլալէտտին փաշայի դէմ. անձնապահ հեծելազօրքերէն մէկը իսկոյն յարձակեցաւ երիտասարդին վրայ և սուրովը գանկը ճեղքեց, ոստիկաններ ալ կրակ ը-

րին: Ոճրագործը առանց բառ մը արտասանել կարենալու մեռաւ շորս վայրկեանի հոգեվարքէ մը ետքը:

— «Թանին» կ'ըսէ թէ Մահմադ Իր վարած թշուառ կեանքին վերջ մը առաւ նպատակով գործած է ոճիրը:

— Մահափորձին տեսն ձէլալէտտին փաշա ու Զօր. Հիլմի փաշա թեթեւապէս վերաւորուեցան: Անցորդներէն ալ վերաւորուեցան բաւական թիւով անձեր:

— Կայսրը Իր բժշկապետն ու Ա. Սենեկապետը Զուպուզլը զրկեց և Խալիլին սրպիսութիւնը հարցնել տուաւ:

— Օտար դեսպաններն ալ իրենց Ա. Թարգմանները զրկելով Խալիլին սրպիսութիւնը հարցնել տուին:

— Խալիլին վիճակը լաւ է: Դարմանող բժիշկներն են Տք. ձէլմի փաշա, Սիւլէյման Նաման փաշա, և Օրիսան պէյ, Վերջին երկուքը միշտ Զուպուզլու կը մնան: Խալիլը զուարթ է, բայց չի խօսիր, վանդի բժիշկները արգելած են ըսելիքը գրաւոր կը յայտնէ: Սնունդն է կաթ և հաւկիթ: Խալիլին մայրն ալ իր զաւկին մօտ կը գտնուի:

— Միւս վերաւորներուն վիճակն ալ լաւ է:

* Յունիս 28ին Աւստրիա—Հունգարիա պաշտօնապէս պատերազմ հրատարակեց Սերպիոյ դէմ հետեւեալ յայտարարութեամբ.

«Սերպիոյ արքայական կառավարութիւնը գոհացրեց կերպով չպատասխանեց Պելկրատի Աւստրիական զինուորին կողմէ 1914 Յունիս 10/23 թուականով իրեն տրուած ծանուցագրին, որով կայս. ու արքայական կառավարութիւնը հարկադրուած է ինքն իսկ պաշտպանելու իր բաւուրներն ու շահերը, և այս առթիւ դիմելու գինու զօրութեան: Ուրեմն Աւստրիա—Հունգարիա այս վայրկեանէն իսկ ինքզինքը պատերազմի մէջ կը նկատէ Սերպիոյ հետ»:

Աւստրիոյ—Հունգարիոյ

Արտաքին գործոց նախարար

ԿՈՄՍ Պէրթուլ

— Աւստրիական զինուորները սերպ հողը մտնելով սկսան տիրել քաղաքներուն:

— Գերմանիա պատերազմի պատրաստութիւն կը տեսնէ:

— Ռուսիա զօրահանութիւն կ'ընէ:

Աւստիկ ամբողջ բովանդակութիւնը Աւստրիոյ կողմէ Սերպիոյ տրուած ծանուցագրին.

«1909 Մարտ 31ին վիեննայի սերպ դեսպանը իր կառավարութեան հրամանով հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ աւստրիական զինուորական թեալին»:

«Սերպիա կը խոստովանի թէ իր բաւուրները չլիարժեքացան Պօնիա—Տէրսէքի մէջ առաջ բերուած կատարուած իրողութեամբ եւ հետեւաբար պիտի համակերպի տէրութեանց կողմէ տրուելիք սրբեւէ

որոշման Պերլինի դաշնագրին 28րդ յօդուածին համաձայն:

Սերպիա համակերպելով Տէրութեանց խորհուրդին, հիմակուքնէ կը խոստանայ թողուլ բողոքողի ու ընդհարողի իր ընթացքը Պօնա-Հէրսէքի կցման նկատմամբ վերջին աշունէն ի վեր, եւ նաեւ յանձն կ'առնէ Աւստրիոյ-Հունգարիոյ նկատմամբ իր արդի քաղաքականութիւնը փոխել, որպէս զի ասկէ վերջը իբր լաւ դրացի ապրի Աւստրիոյ-Հունգարիոյ հետ:

Այդ, վերջին տարիներու պատմութիւնը եւ մանաւանդ Յունիս 28ի ցաւալի դէպքերը ցոյց տուին թէ Սերպիոյ մէջ խռովարարական շարժում մը կայ, որուն նպատակն է Աւստրիա Հունգարիայէն անջատել անոր երկիրներէն քանի մը մասեր: Շարժումը որ Սերպ կառավարութեան աչքին տակ առաջ եկաւ, Սերպիոյ երկիրներէն անդին ալ երեւան եկաւ ահաբեկութիւն արարքներով, ոճրափորձերու շարքով մը եւ սպանութիւններով:

Սերպ կառավարութիւնը ոչ թէ չգործադրեց 1909 Մարտ 31ի իր յայտարարութիւններով ըրած խոստումները, այլ շարժումը քննելու մասին ալ բան մը չըրաւ: Աչք դնեց զանազան ընկերութեանց եղբունական արարքներուն՝ ուղղուած Աւստրիոյ-Հունգարիոյ դէմ. նաեւ թողաւ գլխաւոր նպատակն մամուլին սանձարձակ լեզուին, ոճրին հեղինակներուն փառաբանութեանը, սպանութիւն եւ պաշտօնատարներու մասնակցութեանը խռովարարական շարժումներու եւ փաստաւոր բողոքականտի մը հանրային կրթութեան մէջ: Վերջապէս ներդաշնակութիւնը այն բոլոր ցոյցերուն որ կրնան սերպ ժողովուրդը մղել ատելութիւն սնուցանելու Աւստրիոյ-Հունգարիոյ դէմ եւ անարգելու անոր հաստատութիւնները:

Սերպ կառավարութեան այս մեղապարտ ներդաշնակութիւնը նոյն իսկ դադարած չէր այն միջոցին երբ վերջին Յունիս 28ի դէպքերն ամբողջ աշխարհի հաստատեցին անոր աղետալի հետեւանքները:

Յունիս 28ի ոճրին հեղինակներուն յայտարարութիւններէն կ'երեւայ թէ Սերպիոյ մարդասպանութիւնը Պերլիտի մէջ սարքուած էր, թէ մարդասպաններուն ունեցած գէնքերն ու պայթուցիկները անոնց տրուած էին «Նարոտնա Օպրանա»ի մասնակցող սերպ սպաներու եւ պաշտօնատարներու կողմէ եւ թէ ոճրագործներուն ու անոնց գէնքերուն Պօնա փոխարկութիւնը դիւրացուցած էին սերպ սահմանափակին մէջ պաշտօնեաները:

Վերջ յիշուած քննութեան արդիւնքները թոյլ չեն տար որ աւստրիականացի կառավարութիւնը աւելի շատ ատեն շարունակէ իր երկայնամտութիւնը ու սպասողական ընթացքը որուն վերջին տարիներս կը հետեւէր Պերլիտի մէջ կեդրոնացած շարժումներուն հանդէպ, ուրկէ աւստրիա-

մաճառ հողին վրայ կը տարածուէին: Այդ արդիւնքները ընդհակառակն կը պարտադրեն իրեն վերջ մը տալ Աւստրիոյ-Հունգարիոյ անդորրութեանը յաւիտեական վտանգ սպառնացող արարքներուն: Այդ նպատակին հասնելու համար է որ աւստրիականացի կառավարութիւնը կը հարկադրուի սերպ կառավարութիւնէն պահանջել պաշտօնական յայտարարութիւն մը թէ՛ կը դատապարտէ Աւստրիոյ-Հունգարիոյ դէմ ուղղուած բրթականտը՝ այսինքն Աւստրիոյ-Հունգարիոյ մասը կազմող երկիրները անջատելու հակուսներուն ամբողջութիւնը. նաեւ թէ կը խոստանայ ամէն միջոցներով քննել եղբունական ու ահաբեկութիւն ալ դրթականտը:

Սերպ կառավարութիւնը այդ խոստումին հանդիսական հանգամանք մը տալու համար պէտք է որ պաշտօնաթերթին Ա. էջին մէջ Յունիս 13/26 թուականով հրատարակէ հետեւեալ յայտարարութիւնը.

Սերպիոյ կառավարութիւնը կը դատապարտէ Աւստրիոյ-Հունգարիոյ դէմ ուղղուած բրթականտը՝ այսինքն ամբողջութիւնը այն հակուսներուն որով վերջերս կը տեսնան Աւստրիա-Հունգարիայէն բաժանելու անոր մաս կազմող երկիրները. նաեւ թէ անկեղծօրէն կ'ողբայ ոճրագործական այդ արարքներուն աղէտալի հետեւանքներուն վրայ:

Սերպ կառավարութիւնը կը ցաւի որ սերպ սպաներ ու պաշտօնատարներ մասնակցած են վերոյիշեալ բրթականտին եւ այդպէս վտանգած են այն բարի դրացնութեան յարաբերութիւնները զորս սերպ կառավարութիւնը հանդիսաւորապէս խոստացած էր 1909 Մարտ 31ի իր յայտարարութեամբ:

Սերպ կառավարութիւնը, որ կը մերժէ միջամտութեան ամէն փորձ Աւստրիոյ-Հունգարիոյ ու եւ մասին ժողովուրդներուն ճակատագրին համար, պէտք կը համարի բացարձակապէս ազդարարել Սերպիոյ սպաներուն, պաշտօնատարներուն եւ բոլոր ժողովուրդեան թէ ասկէ վերջը խստիւ պիտի վարուի այդ տեսակ արարքներ ունեցողներուն դէմ. նաեւ ամէն կերպով պիտի քանայ դէպքերուն առաջին առնել ու զսպել:

Այս յայտարարութիւնը միեւնոյն ատեն Սերպիոյ բանակին պիտի հաղորդուի Վեհ. թագաւորին հրամանագրովն եւ սերպ բանակին պաշտօնաթերթին մէջ պիտի հրատարակուի:

Սերպ արքայական կառավարութիւնը յանձնառու կ'ըլլայ նաեւ 1. Ձեռքի ամէն հրատարակութիւն որ միապետութեան դէմ ատելութիւն եւ արհամարհանք կը գրգռէ եւ որ ընդհ. կերպով ուղղուած է անոր հողային ամբողջութեան դէմ, 2. Անմիջապէս լուծել «Նարոտնա Օպրանա» ըսուած ընկերութիւնը, գրաւել անոր բրթականտի միջոցներն եւ նոյն եղանակաւ վարուիլ Սերպիա գլխաւորած ուրիշ ընկերութիւններու հանդէպ որոնք Աւստրիոյ-Հունգարիոյ դէմ բրթականտ կը մղեն:

Սերպ կառավարութիւնը հարկ եղած միջոցները ձեռք պիտի առնէ, որպէս զի լուծեալ ընկերութիւնները չկարենան իրենց գործունէութիւնը շարունակել ուրիշ անուան եւ ուրիշ ձեւի տակ: 3. Սերպիոյ հանրային կրթութեան, ուսուցչական մարմնոյն եւ կրթական միջոցներու մասին, Զինել ինչ քան որ կրնայ ծառայել Աւստրիոյ-Հունգարիոյ դէմ բոլորական մղելու: 4. Զինուորական ծառայութեան եւ ընդհանուր կերպով զինուորական վարչութիւնէն հեռացնել Աւստրիոյ-Հունգարիոյ դէմ բոլորական մղող սպաններն եւ պաշտօնատարները, որոնց անուններն եւ արարքներն աւստրիական վարչութիւնը իրեն կը վերապահէ հաղորդել սերպ կառավարութեան: 5. Ընդունիլ Սերպիոյ մէջ գործակցութիւնն աւստրիական կառավարութեան պաշտօնատարներուն, միապետութեան հողային ամբողջութեան դէմ ուղղուած խռովարարական շարժումը շնչելու համար:

6. Դատական քննութիւն մը կատարել Յունիս 28ի դաւադրութեան այն կուսակիցներուն դէմ, որոնք սերպ հողին վրայ կը գտնուին: Աւստր. կառավարութեան կողմէ ղրկուած պաշտօնատարներ պիտի մասնակցին այդ նպատակաւ կատարուելիք հետազոտութիւններուն:

7. Անմիջապէս ձեռքալալել հրամանատար Վոյտ Թանքսիչն եւ սերպ պետական պաշտօնային Միլան Սիկանովիչ անուն անձը, որոնց մեղսակցութիւնը հաստատուած է Սերպիոյի ոճրին նախաքննութեան արդիւնքներուն համաձայն:

8. Ազգու միջոցներով արգիլել սերպ իշխանութեանց գործակցութիւնը ղէնքի եւ պայթուցիկ նիւթերու ապօրէն առեւտուրին մէջ, արձակել եւ խլստիւ պատժել Շապաքի եւ Լոսնիքայի սահմանագլխին վրայ ծառայող պաշտօնատարները, որոնք օգնած են Սերպիոյի ոճրին հեղինակներուն, սահմանագլխէն անոնց անցքը դիւրացնելով:

9. Աւստր. կառավարութեան բացատրութիւններ տալ սերպ բարձրաստիճան պաշտօնատարներուն թէ՛ Սերպիոյ եւ թէ՛ արտասահմանի մէջ ըրած

անարդարանալի խօսքերուն վրայ: Այս պաշտօնատարները իրենց դիրքին հակառակ վարանած չեն յունիս 28ի ոճրէն ետք տեսակցութիւններու միջոցին թշնամական եղանակով արտայայտուիլ ընդդէմ աւստրիական միապետութեան:

10. Վերջապէս տնյապաղ իմաց տալ աւստր. կառավարութեան թէ վերայիշեալ կէտերուն մէջ պարունակուած միջոցները գործադրուած են: Աւստրիական հարակաւ կառավարութիւնը պատասխան մը կը սպասէ սերպ կառավարութեան առաւելելի մինչեւ այս ամսոյ 25ը, շաբաթ իրիկուան ժամը 6ին:

— Սերպիոյի ոճրին նախաքննութեան արդիւնքներուն վերաբերեալ յիշատակագիր մը կըցուած է այս ծանուցագրին, յոր եւ 8րդ կէտերուն մէջ յիշատակուած պաշտօնատարներու մասին:

* Վերահսկիչ Հօֆ պէյ, որուն ուղեւորութիւնը յետաձգուած էր, երկրորդական քննիչ Բէյամ պէյն եւ միւս հետեւորդներուն հետ, Յունիս 2ին Տրապիզոն ուղեւորեցաւ ռուսական «Սեդարէվիչ Ալէքսի» չորս հետեւով: Հօֆ պէյ կարինէն անցնելով Բուդէ պիտի երթայ եւ հոն պիտի հաստատուի:

— Վերահսկիչ Հօֆ պէյի հետ Բուդէյ ուղեւորեցան անոր հետեւորդները՝ դիւանապետ Մ. Լափիւնա Պէր եւ քարտուղար Մ. Օլաֆ Տալ ու Ռանկվալս Կոֆ: Վէսթէնէք պէյ ալ իր հետեւորդներուն կազմութեան ետքը ճաբայ պիտի ելլէ, այսինքն քսան օրէն:

* Մերսիկայի նախագահ Հուլիան հրաժարեցաւ, տեղը ոնցաւ Քարապաեալ որ անցեալ օր ընդունեց օտար ղեկավարները ազգ. պալատին մէջ: Դեսպանական մարմինն երէց անդամը՝ Սպանիոյ դեսպանը յոյս յայտնեց որ Մերսիկա ձեռք պիտի բերէ իրեն համար այնքան բաղձալուծ խաղաղութիւնը, նաեւ վստահութիւն յայտնեց թէ նախագահ Քարապաեալ ուրքան ասան պաշտօնի վրայ մնայ, ամէն ջանք պիտի ընէ շուտով վերջ տալու համար խռովութեան: Սպանիոյ դեսպանին բանախօսութեանը նախապէս հաւանած էին միւս ղեկավարները: Նախագահը պատասխանեց թէ ամէն կերպով պիտի աշխատի խաղաղութիւնն եւ բոլոր Մերսիկայիներուն միութիւնն իրականացնելու համար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	481
Հին վաւերացումներ	484
Եօթնեակ Գրիսոնէի	486
Գիտական	487
Լուրսա տղրու կիսերէն	489
Լուրսէ նամակ	492
Տեղեկագրական	493

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄ ԲԱԳՐԱՊԵՏ



ԳԵՐՈՐ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Հղումն է. Առնագանգ Զարաթերթի, Բերա, Պայքամ փողոց թիւ 5, Կ Պոլիք

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ.— Արճաւան-
ման տար. 3ր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՏԷ.— Կարողիկէ Արճաւանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արճաւանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու եւէ
յօդուած: 3.— Կեդծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոյժ ի միապէս զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արճաւանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է օր և իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն առ-
օտէ ծանուցմունք, զիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-տարեաներ,
մահազդներ, եւն. եւն.: Գրները անմիջեւի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:
VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.*

EN TURQUIE: *Constantinople et Smyrne.*

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

*Siège à Galata, Place du Pôht de Karakeuy
Agences à Stamboul, Péra et Scatiri.*

Le Wiener Bank-Verein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;

Paievements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.